Լ. Ի. Բրեժնևի ծննդյան 70-ամյակի առթիվ

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ, ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍ, ԸՆԿԵՐ ԼԵՈՆԻԴ ԻԼՅԻՉ ԲՐԵԺՆԵՎԻՆ ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ԵՎ «ՈՍԿԵ ԱՍՏՂ» ԵՐԿՐՈՐԴ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոմունիստական շինարարության գործում կոմունիստական կուսակցությանն ու սովետական պետությանը մատուցած ակնառու ծառայությունների, ժողովուրդների խաղաղության և անվտանգության ամրապնդման ասպարեզում ակտիվ, բեղմնավոր գործունեության համար, Հայրենական մեծ պատերազմում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակի գործում, Սովետական Միության տնտեսական ու պաշտպանական հզորության ամրապնդման ասպարեզում ներդրած անձնական մեծ ավանդի համար և ծննդյան յոթանասնամյակի կապակցությամբ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, Սովետական Միության հերոս, սոցիալիստական աշխատանքի հերոս ընկեր Լեոնիդ Իլյիչ ԲՐԵԺՆԵՎԻՆ պարգևատրել ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ և ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԻ «ՈՍԿԵ ԱՍՏՂ» ԵՐԿՐՈՐԴ ՄԵԴԱԼՈՎ։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈԴԳՈՐՆԻ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱՋԵ

Մոսկվա, Կրեմլ, 18 դեկտեմբերի 1976 թ.։

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՍՄԿԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՍՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՇԱԼ Լ. Ի. ԲՐԵԺՆԵՎԻՆ ՍՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԲԻ ՈՍԿԵԴՐՈՇՄ ՊԱՏԿԵՐՈՎ ՊԱՏՎԱՎՈՐ ՋԵՆՔՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երկրի պաշտպանունակության ամրապնդման և ՍՍՀՄ զինված ուժերի կատարելագործման ասպարեզում ունեցած ակնառու ծառայությունների համար ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ պաշտպանության խորհրդի նախագահ, Սովետական Միության մարշալ Լեոնիդ Իլյիչ ԲՐԵԺՆԵՎԻՆ պարգևատրել ՍՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԲԻ ՈՍԿԵԴՐՈՇՄ ՊԱՏԿԵՐՈՎ ՊԱՏՎԱՎՈՐ ՋԵՆՔՈՎ։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈԴԳՈՐՆԻ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱՋԵ

Մոսկվա, Կրեմլ, 18 դեկտեմբերի 1976 թ.։